ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 03, 14.04.2022թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 11.04.2022թ. որոշում (որոշում ՈՐԽ0102-19/Լ-Հ) արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ0102 -19/L-Հ
Դաս: ՀՊ
«11» ապրիլի 2022թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի ժզ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) Կանոնադրության 12.1 կետի ժը) ենթակետը, ինչպես նաև պարտատոմսերի թողարկման միջոցով Բանկի պարտավորությունների կազմի և կառուցվածքի բարելավման նպատակով՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 08.04.2022թ. որոշմամբ գրանցված ծրագրային ազդագրի հիման վրա 2022 թվականի ապրիլի 21-ին թողարկել 5,000,000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 200,000 (երկու հարյուր հազար) հատ դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ 27 (քսանյոթ) ամիս մարման ժամկետով, 4.75% (չորս ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական տոկոս) տարեկան եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ (այսուհետ՝ Պարտատոմսեր):
2. Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնել ուղղակի վաճառքի ձևով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով: Տեղաբաշխումը սկսել 2022 թվականի ապրիլի 21-ին՝ ժամը 09:00-ին, և ավարտել 2022 թվականի հուլիսի 21-ին՝ ժամը 15:00-ին: Տեղաբաշխումն իրականացնել Պարտատոմսերի ծրագրային ազդագրով սահմանված կարգով հաշվարկված ըստ օրերի վաճառքի գնով:
3. Մինչև սույն որոշման 2-րդ կետում նշված ժամկետի ավարտը տեղաբաշխման ենթակա Պարտատոմսերի քանակը լրանալու դեպքում դադարեցնել տեղաբաշխման գործընթացը:
4. Տեղաբաշխվող Պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 24[00]-ի դրությամբ Պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ Պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:

5. Պարտատոմսերի մարումը կատարել թողարկման օրվանից սկսած 27 (քսանյոթ) ամիս անց: Պարտատոմսերի մարման գումարի փոխանցումը կատարել պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 24^{00}-ի դրությամբ Պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ Պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:
6. Հաստատել Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները՝ համաձայն Հավելված 1-ի:
7. Հանձնարարել Բանկի Գործադիր տնօրենին՝
1) Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները ներկայացնել ՀՀ Կենտրոնական Բանկ՝ ի գիտություն,
2) կազմակերպել «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության հետ «Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման» պայմանագրի կնքումը,
3) թողարկվող Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո ապահովել ցուցակման հայտի ներկայացումը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ՝ կարգավորվող շուկայում Պարտատոմսերի առևտրի կազմակերպման նպատակով,
4) երկրորդային շուկայում Պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով համապատասխան մասնագիտացված ընկերության հետ կնքել Պարտատոմսերի շուկայի ստեղծման պայմանագիր:
8. Պարտատոմսերի թողարկումն ու տեղաբաշխումն իրականացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 38/Լ-Հ որոշմամբ հաստատված «Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և սպասարկման կարգ»-ին համապատասխան:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ **Գրիգոր Հովհաննիսյան**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ • ARARATBANK OJSC • ARARATBANK OAO • 02500518